Luys Lnyu®

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՀՐԱՊԱՐԱԿՎԱԾ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՎԱՐԿԱՆԻՇԱՅԻՆ ԻՆԴԵՔՍՆԵՐԸ

Հաշվետվություն Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակված զեկույցի (2018թ.) հիման վրա

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 2
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 2
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 5
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 6
ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 9
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 9
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 10
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 12
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 14
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ 17
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 17
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 18
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 21
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 27
ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՆԴԵՔՍ 28
ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ 28
ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ 29
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ 31
ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ 34

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային տնտեսական համաժողովը (ՀՏՀ) շահույթ չհետապնդող շվեյցարական կազմակերպություն է, որի նպատակն է ձևավորել գլոբալ, տարածաշրջանային և արդյունաբերական զարգացած միջավայր: Յուրաքանչյուր տարի Դավոսում տեղի ունեցող համաժողովին մասնակցում են աշխարհի տարբեր երկրներից շուրջ 2 500 գործարար և քաղաքական առաջնորդներ, մտավորականներ և լրագրողներ՝ քննարկելու աշխարհի առջև ծառացած ամենաակնառու հարցերը: Համաժողովի արդյունքում ներկայացվում են հիմնական վարկանիշային հետազոտությունները, որոնցից են[1՝]

- Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքս, 2017թ.
- Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս, 2017թ.
- Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքս, 2018թ.
- Համաշխարհային մարդկային կապիտալի ինդեքս, 2017թ.
- Համաշխարհային մրցունակության ինդեքս, 2018թ.[2]

[1] Զեկույցների տարեթվերը տարբերվում են, քանի որ վերջիններիս հրապարակման և վերլուծություններում դիտարկվող տարիները կարող են չհամընկնել:
[2] Համաշխարհային մրցունակության ինդեքս, 2018թ. վերլուծությունը ներքոհիշյալ աշխատանքում բացակայում է, քանի որ վերջինիս մասին վերլուծական աշխատանքը ներկայացվել է առանձին:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսը (այսուհետ՝ ՀԷԵԱ ինդեքս) հնարավորություն է տալիս համեմատել տարբեր երկրների էներգետիկ համակարգերի բնութագրերը: Համաշխարհային տնտեսական համաժողովը արդեն հինգերորդ տարին է, ինչ հրապարակում է ՀԷԵԱ ինդեքսը՝ նպատակ ունենալով ներկայացնել երկրների էներգետիկ համակարգերի զարգացման միտումներն ու արդյունավետությունը:

ՀԷԵԱ ինդեքսը ստացվում է երեք ենթաինդեքսների բաղադրյալ գնահատման արդյունքում: Ներկայացնենք այդ ենթաինդեքսները և դրանց բնութագրերը.

1. **Տնտեսական աճը և զարգացումը**: Այս ենթաինդեքսը բացահայտում է՝ նպաստո՞ւմ է երկրի էներգետիկ համակարգը, թե՞ բացասական ազդեցություն է ունենում տնտեսական աճի և երկրի զարգացածության վրա: Ենթաինդեքսի հաշվարկման ցուցանիշներից է ՀՆԱ-ի մեջ էներգիայի ներմուծման և արտահանման մասնաբաժինը, արդյունաբերության մեջ կիրառվող էլեկտրականության արժեքը, էներգիայի մեկ միավորի օգտագործման արդյունքում ստեղծված ՀՆԱ-ի չափը:

2. Շրջակա միջավայրի կայունությունը: Այս ենթաինդեքսը ներկայացնում է էներգետիկ մատակարարման և սպառման ազդեցությունը շրջակա միջավայրի վրա: Ենթաինդեքսի հաշվարկման ցուցանիշներից են՝ ընդհանուր էներգիայի մեջ այլընտրանքային և միջուկային էներգիայի մասնաբաժինը, Էլեկտրաէներգիայի արտադրությունից CO_2-ի արտանետումները, բնակչության մեկ շնչի հաշվով մեթանի և ազոտային օքսիդի արտանետումները, օդի աղտոտվածության մակարդակը, մարդատար ավտոմեքենաների դեպքում վառելիքի միջին տնտեսման մակարդակը:

3. Էներգիայի հասանելիությունը և անվտանգությունը: Այս ենթաինդեքսը ներկայացնում է էներգիայի մատակարարման ապահովության, հասանելիության և էներգիայի աղբյուրների տարբերակվածության գնահատականը: Ենթաինդեքսի հաշվարկման ցուցանիշներից են՝ Էլեկտրաֆիկացման մակարդակը, հիմնական էներգիայի մատակարարման աղբյուրների տարբերակվածությունը, Էներգիայի ներմուծման աղբյուրների բազմազանությունը, սպառվող էներգիայի մեջ ներմուծվող էներգիայի մասնաբաժինը:

Կառույցի կողմից այս ցուցանիշի հրապարակումը նպատակ է հետապնդում ընդգծել, թե որքանով են երկրները կարողացել ստեղծել հասանելի, կայուն և ապահով էներգաարդյունավետ համակարգեր: Ինչպես յուրաքանչյուր ինդեքս, ՀԷԵԱ ինդեքսը նույնպես չի կարող ամբողջապես ներկայացնել էներգետիկ համակարգի բոլոր խնդիրները, սակայն, այն հնարավորություն է տալիս ընդգծել ազգային էներգետիկ համակարգի բնութագիրը՝ առաջ քաշելով հիմնական խնդիրները, ինչպես նաև ՀԷԵԱ ինդեքսի հրապարակման մեջ առանձնացվում են գործող էներգետիկ համակարգերի այլ, ավելի արդյունավետ էներգետիկ համակարգերով փոխարինման տարբեր մեխանիզմներ: Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսը երկրների կողմից կիրառվում է էներգիային առնչվող ոլորտներում, տարբեր ծրագրերի, ռազմավարությունների մշակման մեջ:

Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսի գնահատման դեպքում յուրաքանչյուր տարի դիտարկվող երկրների շարքը և քանակը կարող է փոխվել: Ինչպես հիմնականում բոլոր միջազգային ցուցանիշների հաշվարկի ժամանակ, այնպես էլ այս դեպքում, հրապարակվող տվյալներում նույն ցուցանիշի ազգային վիճակագրության և միջազգային կազմակերպության հրապարակած արժեքները կարող են չհամընկնել, քանի որ միջազգային կառույցները ազգային տվյալները ստանդարտացնում են՝ երկրների միջև համեմատականությունը պահպանելու համար, և որոշ դեպքերում առկա է նաև տվյալների

անհասանելիություն: 2017թ. Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսի հաշվարկը իրականացվել է 127 երկրների համար:

ՀԷԵԱ ինդեքսի հրապարակմանը կից Համաշխարհային տնտեսական համաժողովի պաշտոնական կայքում հրապարակվում են նաև հաշվարկի մեթոդաբանությունը և տվյալների բազան՝ http://www3.weforum.org/docs/WEF_GlobalEnergyArchitecturePerformance_Index_2017.pdf, որտեղ երևում են նաև տվյալների ձեռքբերման աղբյուրները, չափման միավորները և այլն:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսը հնարավորություն է տալիս բացահայտել էներգիայի հասանելության և ապահովության, ինչպես նաև վերջինիս ունեցած ազդեցությունների հետ կապված խնդիրները և դրանց հիման վրա մշակել հնարավոր լուծումներ և մեխանիզմներ: Ինչպես արդեն նշեցինք, ՀԷԵԱ ինդեքսը ստացվում է երեք հիմնական ենթաինդեքսների համախմբման արդյունքում: Իր հերթին՝ դիտարկվող երեք ենթաինդեքսները ստացվում են տարբեր ցուցանիշների դիտարկման արդյունքում: Ընդհանուր առմամբ, ՀԷԵԱ ինդեքսի հաշվարկում կիրառվում են 18 ցուցանիշներ: Դիտարկվող յուրաքանչյուր ցուցանիշի համար հաշվարկվում են գնահատականներ (0-ից 1) և համապատասխան հորիզոնականներ: Այնուհետև ենթաինդեքսները ստանալու համար այդ ցուցանիշները, համաձայն իրենց համար ի սկզբանե սահմանված կշիռների, ագրեգացվում են, իսկ ենթաինդեքսների ընդհանուր համախմբման արդյունքում ստացվում է ՀԷԵԱ ինդեքսը: Հաշվարկի առավել մանրամասն մեթոդաբանությունը ներկայացված է http://wef.ch/eapimethodology հղմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2017թ. ՀՀ ՀԷԵԱ ինդեքսը կազմել է 0.63, որի արդյունքում երկիրը դիտարկվող 127 երկրների շարքում զբաղեցրել է 58-րդ հորիզոնականը: Եթե դիտարկենք վերջին հինգ տարիների ընթացքում ՀՀ ՀԷԵԱ ինդեքսները, ապա ակնհայտ է, որ 2015թ. նախորդ տարիների համեմատությամբ ցուցանիշը էապես բարելավվել է, որը հնարավորություն է տվել երկրին 2015-ին զբաղեցնել 50-րդ հորիզոնականը՝ նախորդ տարվա 59-րդ հորիզոնականի փոխարեն: 2016թ. նախորդ տարվա համեմատ ցուցանիշը նվազել է 0.01 միավորով, սակայն այս դեպքում երկիրը 2015թ. 50-րդ հորիզոնականից 2016-ին տեղափոխվել է 56-րդ հորիզոնական, իսկ 2017թ. նախորդ տարվա հետ համեմատած՝ ինդեքսը նույնն է: Ակնհայտ է նաև այն փաստը, որ թեև ՀՀ ցուցանիշը 2017թ. նախորդ տարվա համեմատ չի փոխվել, այդուհանդերձ Հայաստանի դիրքերը երկու հորիզոնականով իջել են՝ 2016թ. 56-րդ հորիզոնականից 2017-ին տեղափոխվելով 58-րդ հորիզոնական: Դա պայմանավորված է ինչպես մնացած դիտարկվող երկրների ցուցանիշների բարելավմամբ, այնպես էլ յուրաքանչյուր տարի դիտարկվող երկրների շրջանակի ընդլայնմամբ:

Գծապատկեր 1. ՀՀ Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսի զարգացումները



2013-2017թթ. ՀԷԵԱ ինդեքսի դրական զարգացմանը նպաստել են բոլոր երեք ենթաինդեքսները, որոնցից դիտարկվող տարիների ընթացքում ամենամեծ դրական աճն ունի Տնտեսական աճի և զարգացածության ենթաինդեքսը: 2017թ. 2013-ի համեմատ Տնտեսական աճի և զարգացածության ենթաինդեքսն աճել է 0.13 միավորով, Շրջակա միջավայրի կայունության ենթաինդեքսը՝ 0.11 միավորով, իսկ Էներգիայի հասանելիության և ապահովության ենթաինդեքսը՝ 0.06 միավորով:

Աղյուսակ 1. ՀՀ Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսի ցուցանիշները

Ցուցանիշ/Տարի	2013	2014	2015	2016	2017
	Դիտարկվող երկրների քանակը՝ 105	Դիտարկվող երկրների քանակը՝ 124	Դիտարկվող երկրների քանակը՝ 125	Դիտարկվող երկրների քանակը՝ 126	Դիտարկվող երկրների քանակը՝ 127
Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքս	0.54	0.53	0.64	0.63	0.63
Տնտեսական աճի և զարգացածության ենթաինդեքս	0.36	0.33	0.44	0.47	0.49
Շրջակա միջավայրի կայունության ենթաինդեքս	0.61	0.57	0.76	0.71	0.72
Էներգիայի հասանելիության և ապահովության ենթաինդեքս	0.64	0.69	0.72	0.71	0.70
Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսի հիման վրա զբաղեցրած հորիզոնական	60	59	50	56	58

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հայաստանը ՀԷԵԱ ինդեքսի մակարդակով 2017թվականին զիջում է տարածաշրջանի հարևան երկրներից Ադրբեջանին՝ 36-րդ հորիզոնական (ՀԷԵԱ ինդեքս՝ 0.67), Վրաստանին՝ 55-րդ հորիզոնական (ՀԷԵԱ ինդեքս՝ 0.64), Թուրքիային՝ 41-րդ հորիզոնական (ՀԷԵԱ ինդեքս՝ 0.66) և գերազանցում է Իրանին՝ 120-րդ հորիզոնական (ՀԷԵԱ ինդեքս՝ 0.46): Եթե փորձենք համեմատել ցուցանիշները՝ ըստ ենթաինդեքսների, ապա ակնհայտ է, որ Տնտեսական աճի և զարգացածության ենթաինդեքսով Հայաստանը գերազանցում է Վրաստանին և Իրանին, Շրջակա միջավայրի կայունության

ենթաինդեքսով՝ Ադրբեջանին, Իրանին և Թուրքիային, իսկ Էներգիայի հասանելիության և ապահովության ենթաինդեքսով Հայաստանը զիջում է հարևան երկրներին:

Աղյուսակ 2. ՀՀ և հարևան երկրների ՀԷԵԱ ինդեքսի ցուցանիշների համեմատականը

Ցուցանիշ/Երկիր	Հայաստան	Ադրբեջան	Վրաստան	Իրան	Թուրքիա
Համաշխարհային էներգետիկ ենթակառուցվածքների արդյունավետության ինդեքսը	**0.63**	**0.67**	**0.64**	**0.46**	**0.66**
Տնտեսական աճի և զարգացածության ենթաինդեքս	0.49	0.65	0.46	0.27	0.59
Շրջակա միջավայրի կայունության ենթաինդեքս	0.72	0.57	0.74	0.36	0.62
Էներգիայի հասանելիության և ապահովության ենթաինդեքս	0.70	0.79	0.72	0.75	0.78
ՀԷԵԱ ինդեքսի հիման վրա զբաղեցրած հորիզոնական	**58**	**36**	**55**	**120**	**41**

Հայատանը ՀԷԵԱ ինդեքսի գնահատականով լավագույն ցուցանիշ դրսևորել է 2015-ին, իսկ հաջորդող տարիներին ՀՀ ցուցանիշները և զբաղեցրած հորիզոնականները վատթարացել են: Այսպես, 2017թ. 2016-ի համեմատությամբ 127 երկրների շարքում Հայաստանն իր դիրքերը զիջել է 2 հորիզոնականով, սակայն տարածաշրջանային համեմատության մեջ ՀՀ դիրքերը չեն փոխվել: Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի դիտարկվող երկրների շարքում ՀՀ-ն պահպանել է իր 5-րդ հորիզոնականը: Նույնը նկատելի է նաև 2015-2016թթ. համեմատության դեպքում: Այսպես, 2016-ին 2015-ի համեմատությամբ, ՀՀ դիրքը 126 երկրների շարքում նվազել է 6 հորիզոնականով, սակայն տարածաշրջանային համատեքստում ՀՀ-ն կրկին պահպանել է իր 5-րդ հորիզոնականը:

Գծապատկեր 2. ՀՀ ՀԷԵԱ ինդեքսը, զբաղեցրած հորիզոնականը աշխարհի և տարածաշրջանի համապատկերում



Դիտարկվող տարիներին ՀՀ ՀԷԵԱ ինդեքսի գնահատականները մշտապես գերազանցել են աշխարհի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշներին: 2017թ. ՀՀ ցուցանիշը 0.04 միավորով գերազանցում է Արևելյան Եվրոպայի ու Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշին (0.59), իսկ աշխարհի միջին ցուցանիշին (0.61) ՀՀ-ն գերազանցում է 0.02 միավորով:

Աղյուսակ 3. ՀՀ ՀԷԵԱ ինդեքսի համեմատականը աշխարհի և Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ցուցանիշների հետ

Ցուցանիշ/Տարի	2014	2015	2016	2017
ՀՀ ՀԷԵԱ ինդեքս	**0.53**	**0.64**	**0.63**	**0.63**
Աշխարհի միջին ՀԷԵԱ ինդեքս	0.52	0.59	0.60	0.61
Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի միջին ՀԷԵԱ ինդեքս	0.49	0.58	0.59	0.59

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹՅԱՆ ԵՎ ԶԲՈՍԱՇՐՋՈՒԹՅԱՆ ՄՐՑՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից հրապարակվող հաջորդ ցուցանիշը Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքսն է (այսուհետ՝ ՃԶՄ ինդեքս): 2007-2009թթ. Համաշխարհային տնտեսական համաժողովը ցուցանիշը հրապարակում էր տարեկան կտրվածքով, սակայն 2009-ից հետո ցուցանիշը հրապարակվում է երկու տարին մեկ անգամ: ՃԶՄ ինդեքսը ներկայացնում է այն գործոնների և քաղաքականությունների ամբողջությունը, որոնք նպաստում են ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի կայուն զարգացմանը: Ինդեքսը հնարավորություն է տալիս երկրներին տեսնել տվյալ ոլորտում իրենց զարգացումները, խնդիրները, համեմատականը այլ երկրների հետ, ինչպես նաև այդ տվյալների հիման վրա մշակել համապատասխան միջոցառումներ դրական տեղաշարժեր ապահովելու համար: 2017թ. Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության վերաբերյալ զեկույցը ուսումնասիրել է 136 երկրների տնտեսությունները: Զեկույցը պարունակում է տվյալ ոլորտի հետ կապված համաշխարհային զարգացումները, գնահատականները, ինչպես նաև դիտարկվող 136 երկրներից յուրաքանչյուրի համար ներկայացնում է ընդհանուր բնութագրերը և ցուցանիշները: 2017թ. արդյունքներով աշխարհի ամենաբարձր Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս ունեցող երկրների շարքը գլխավորում է Իսպանիան (ՃԶՄ ինդեքս՝ 5.43), որին հաջորդում են Ֆրանսիան (ՃԶՄ ինդեքս՝ 5.32) և Գերմանիան (ՃԶՄ ինդեքս՝ 5.28): Լավագույն տասնյակում են նաև Ճապոնիան, Անգլիան, ԱՄՆ-ը, Ավստրալիան, Իտալիան, Կանադան և Շվեյցարիան: Ամենացածր Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս ունեցող երկրների շարքը գլխավորում է Եմենը (ՃԶՄ ինդեքս՝ 2.44), որին հաջորդում են Չադը, Բուրունդին, Կոնգոն և այլն:

ՃԶՄ ինդեքսի հաշվարկը իրականացվում է չորս ենթաինդեքսների բաղադրյալ գնահատման արդյունքում: Յուրաքանչյուր ենթաինդեքսի հաշվարկման համար կիրառվում են առանձին ցուցանիշներ, որոնք էլ իրենց հերթին հաշվարկվում են տարբեր տվյալների հիման վրա: Ընդհանուր առմամբ ՃԶՄ ինդեքսի հաշվարկման համար կիրառվում են 14 ցուցանիշներ, որոնց հաշվարկմանը մասնակցում են 90 առանձին տվյալներ: Ցուցանիշների գնահատումը իրականացվում է ստացվող տվյալները 1-ից (վատ) մինչև 7 (լավ) սանդղակով գնահատման արդյունքում: Տվյալների հավաքագրման աղբյուրները առավել մանրամասն ներկայացվում են զեկույցի վերջում ընդգրկված Տեխնիկական ծանոթագրություններում: Տվյալների հաշվարկման մեթոդաբանությունը առավել մանրամասն ներկայացված է http://reports.weforum.org/travel-and-tourism-competitiveness-report-2017/methodology-details/ հղմամբ:

Ստորև ներկայացնենք ՃԶՄ ինդեքսի հաշվարկման համար կիրառվող ենթաինդեքսները և ցուցանիշները.

Գծապատկեր 3. ՃԶՄ ինդեքսի հաշվարկման ենթաինդեքսները և ցուցանիշները



ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2017թ. ՀՀ ՃԶՄ ինդեքսը կազմել է 3.53, ըստ որի՝ երկիրը դիտարկվող 136 երկրների շարքում զբաղեցրել է 84-րդ հորիզոնականը: Դիտարկվող ժամանակահատվածում ՀՀ դիրքերը լավագույնն են եղել 2007-ին: 2013-ին ՃԶՄ ինդեքսը թեպետ գերազանցում է 2007թ. ցուցանիշը, սակայն, երկիրը զբաղեցնում է ավելի ցածր հորիզոնական, քան 2007-ին: Դա հիմնականում պայմանավորված է դիտարկվող այլ երկրների ավելի լավ ցուցանիշների դրսևորմամբ: 2015-ին ՀՀ ՃԶՄ ինդեքսը 2013-ի հետ համեմատ նվազել է, իսկ 2017-ին 2015-ի համեմատ նկատվել է ՃԶՄ ինդեքսի աճ 0.11 միավորով, որը բարելավել է ՀՀ դիրքերը 5 հորիզոնականով՝ 2015-ի 89-րդ հորիզոնականից 2017-ին երկիրը տեղափոխելով 84-րդ հորիզոնական:

Գծապատկեր 4. ՀՀ Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքսի զարգացումները



Համաձայն Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության զեկույցի՝ 2017թ. ՀՀ ժամանել է 1.191.910 զբոսաշրջիկ, իսկ յուրաքանչյուր զբոսաշրջիկ երկրում միջին հաշվով ծախսել է $785.1: Ստորև ներկայացնենք զեկույցի կողմից ներկայացվող ՀՀ զբոսաշրջության ոլորտի հիմնական ցուցանիշները:

Աղյուսակ 4. ՀՀ զբոսաշրջության ոլորտի հիմնական ցուցանիշները

Ցուցանիշ	Տվյալ
ՀՀ ժամանած զբոսաշրջիկների թիվը, մարդ	1.191.910
ՀՀ-ում յուրաքանչյուր զբոսաշրջիկի կողմից ծախսված միջին գումարը	$785.1
Ընդամենը զբոսաշրջիկներից ստացված գումարը	$935.8 մլն
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի ՀՆԱ-ն	$383.1 մլն
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի կշիռը ՀՆԱ մեջ, %	3.8%
Ոլորտում գրանցված աշխատողների թիվը, մարդ	40.158
Մասնաբաժինը ընդհանուր զբաղվածների մեջ	3.3%

2017թ. ՀՀ ՃԶՄ ինդեքսի վրա դիտարկվող չորս ենթաինդեքսներից ամենամեծ դրական ազդեցությունն ունի «Արդյունավետ միջավայրի ստեղծում» ենթաինդեքսը, իսկ վերջինիս վրա առավել դրական ազդեցություն ունի Ապահովություն և անվտանգություն ցուցանիշը: Դիտարկենք ՀՀ գնահատականները՝ ըստ ենթաինդեքսների և ցուցանիշների առանձին աղյուսակով.

Աղյուսակ 5. Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ենթաինդեքսները և ցուցանիշները

Ցուցանիշ	Գնահատական	Հորիզոնական
Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքս	**3.53**	**84**
Արդյունավետ միջավայրի ստեղծում	**5.2**	**51**
Բիզնես միջավայր	4.87	39
Ապահովություն և անվտանգություն	5.86	34
Առողջություն և հիգիենա	5.91	48
Մարդկային ռեսուրսներ և աշխատաշուկա	4.84	45
Տեղեկատվական և կապի տեխնոլոգիաների առկայություն	4.34	71
Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականությունները և նպաստավոր պայմանները	**3.9**	**104**
Ճանապարհորդության և տուրիզմի ոլորտը որպես գերակա ոլորտ	4.58	71
Միջազգային շուկաների հանդեպ բացվածությունը	2.6	95
Գնային մրցունակություն	4.79	80
Շրջակա միջավայրի կայունություն	3.77	102
Ենթակառուցվածքներ	**3.0**	**84**
Օդային տրասպորտի ենթակառուցվածքներ	2.2	88
Վերգետնյա և նավահանգստային համակարգերի ենթակառուցվածքներ	2.86	88
Տուրիզմի ծառայությունների ենթակառուցվածքներ	3.94	74
Բնական և մշակութային ռեսուրսներ	**2.00**	**107**
Բնական ռեսուրսներ	2.6	89
Բիզնեսի և մշակութային ռեսուրսների համար ճանապարհորդություններ	1.4	99

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հայաստանը ՃՋՄ ինդեքսի ցուցանիշով 2017թ. զիջում է տարածաշրջանի հարևան երկրներից Ադրբեջանին՝ 71-րդ հորիզոնական (ՃՋՄ ինդեքս՝ 3.70),

Վրաստանին՝ 70-րդ հորիզոնական (ՃՋՄ ինդեքս՝ 3.70), Թուրքիային՝ 44-րդ հորիզոնական (ՃՋՄ ինդեքս՝ 4.14) և գերազանցում է Իրանին՝ 93-րդ հորիզոնական (ՃՋՄ ինդեքս՝ 3.43):

Աղյուսակ 6. ՀՀ և հարևան երկրների Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ինդեքսը

Երկիր/Ցուցանիշ	Ինդեքս	Հորիզոնական	Փոփոխությունը 2015թ.-ի նկատմամբ
Հայաստան	3.53	84	5
Վրաստան	3.70	70	1
Ադրբեջան	3.70	71	13
Իրան	3.43	93	4
Թուրքիա	4.14	44	0
Ռուսաստան	4.15	43	2
Ղազախստան	3.59	81	4
Ղրղզստան	3.10	115	1

Հայաստանը «Արդյունավետ միջավայրի ստեղծում» ենթաինդեքսի դեպքում գերազանցում է Իրանի և Թուրքիայի ցուցանիշներին, «Ենթակառուցվածքներ» ենթաինդեքսի դեպքում՝ Իրանին, «Բնական և մշակութային ռեսուրսներ» ենթաինդեքսի դեպքում թեև Հայաստանը և Վրաստանը ունեն հավասար ցուցանիշներ, սակայն զբաղեցրած դիրքով ՀՀ-ն գերազանցում է Վրաստանին, իսկ «Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի համար մշակված քաղաքականություններ և նպաստավոր պայմաններ» ենթաինդեքսի դեպքում ՀՀ-ն զիջում է հարևան երկրներին:

Աղյուսակ 7. ՀՀ և հարևան երկրների Ճանապարհորդության և զբոսաշրջության մրցունակության ենթաինդեքսները

Երկիր/Ցուցանիշ	Արդյունավետ միջավայրի ստեղծում		Ճանապարհորդության և զբոսաշրջության ոլորտի քաղաքականությունը և նպաստավոր պայմանները		Ենթակառուցվածք-ներ		Բնական և մշակութային ռեսուրսներ	
	Ինդեքս	Դիրք	Ինդեքս	Դիրք	Ինդեքս	Դիրք	Ինդեքս	Դիրք
Հայաստան	5.2	51	3.9	104	3.0	84	2.0	107
Իրան	4.4	91	4.1	90	2.6	101	2.6	60
Թուրքիա	4.5	82	4.2	75	4.3	38	3.5	26
Վրաստան	5.3	37	4.3	60	3.2	76	2.0	109
Ադրբեջան	5.3	38	4.3	66	3.2	77	2.1	100

ՀՀ-ն ՃԶՄ ինդեքսի ցուցանիշով (3.53) 0.03 միավորով գերազանցում է Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների միջին ցուցանիշին (3.50), իսկ աշխարհի միջին ցուցանիշին (3.81) ՀՀ-ի ցուցանիշը զիջում է 0.28 միավորով:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ԳԵՆԴԵՐԱՅԻՆ ԱՆՀԱՎԱՍԱՐՈՒԹՅԱՆ ԻՆԴԵՔՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը (այսուհետ՝ ՀԳԱ ինդեքս) Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից առաջին անգամ ներկայացվել է 2006թ.: Ինդեքսը չափում է երկրների գենդերային անհավասարությունները և հաշվարկվում է 4 առանցքային ոլորտներում՝

- Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ,
- Կրթության ձեռքբերում,
- Առողջություն և գոյատևում,
- Քաղաքական մասնակցություն:

Ցուցանիշը, ըստ էության, արտացոլում է կանանց ու տղամարդկանց հնարավորությունների միջև եղած տարբերությունները նշված ոլորտներից յուրաքանչյուրում: Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը կարևորվում է նրանով, որ բացահայտում է կանանց ներուժի անարդյունավետ օգտագործումը տվյալ երկրի զարգացման գործընթացներում և ցույց է տալիս գենդերային անհավասարության և երկրի մրցունակության միջև անմիջական կապը, քանի որ գենդերային անհավասարության արդյունքում մարդկային կապիտալը կիրառվում է ոչ իր ամբողջ ներուժով, որն էլ սահմանափակում է երկրի հնարավոր մրցունակությունը:

2018թ. զեկույցը դիտարկել է 149 երկրների տնտեսությունները և 0-ից մինչև 1 սանդղակով գնահատել է ՀԳԱ ինդեքսի ստացման համար կիրառվող չորս ենթաինդեքսները: Զեկույցը բաղկացած է երկու մասից: Առաջինում մասում ներկայացվում են տվյալների ձեռքբերման աղբյուրները և ընդհանուր բնութագրերը, մեթոդաբանությունը, ՀԳԱ ինդեքսի գլոբալ զարգացումները, միտումները, ինչպես

նաև գենդերային հավասարության գնահատականները՝ մասնագիտական գործունեության տեսանկյունից: Զեկույցի երկրորդ մասում արդեն ներկայացվում են ըստ առանձին երկրների ՀԳԱ ինդեքսները, գնահատականները և ցուցանիշները:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

ՀԳԱ ինդեքսի հաշվարկման ընդհանուր մեթոդաբանությունը 2006 թվականից ի վեր չի փոխվել: ՀԳԱ ինդեքսի գնահատման հիմքում ընկած է այն սկզբունքը, որ ինդեքսը չափում է ոչ թե մակարդակը, այլ գենդերային անհավասարության ճեղքվածքը, ինչպես նաև դասակարգում է երկրները՝ ըստ գենդերային հավասարության/անհավասարության, այլ ոչ թե միայն կանանց մասնակցության մակարդակով: Ինչպես արդեն նշեցինք, ՀԳԱ ինդեքսը ստացվում է չորս ենթաինդեքսների և վերջիններիս հաշվարկման համար կիրառվող 14 ցուցանիշների համալիր գնահատման արդյունքում: Ներկայացնենք այդ ենթաինդեքսները և ցուցանիշները.

Աղյուսակ 8. ՀԳԱ ինդեքսի հաշվարկման համար կիրառվող ենթաինդեքսները և ցուցանիշները

Ենթաինդեքս	Ցուցանիշ	Տվյալների ձեռքբերման աղբյուրը և ժամանակահատվածը
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	Կանանց և տղամարդկանց աշխատուժի մասնակցության հարաբերակցությունը (կին/տղամարդ)	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա, 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
	Միևնույն կատարված աշխատանքի համար կանանց և տղամարդկանց վարձատրության հավասարությունը (0-ից 1 գնահատման սանդղակ, կին/տղամարդ)	Համաշխարհային տնտեսական ֆորում, Հանրային կարծիքի հարցում (EOS), 2017-2018
	Կանանց և տղամարդկանց վաստակած եկամուտի հարաբերակցությունը (կին/տղամարդ)	Համաշխարհային տնտեսական ֆորումի հաշվարկները համաձայն Միացյալ ազգերի զարգացման ծրագրի մեթոդաբանության: Հիմք է ընդունվել Մարդկային ներուժի զարգացման Զեկույցը, 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
	Օրենսդրական համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում ընդգրկված կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը (կին/տղամարդ)	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա, 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
	Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում ընդգրկված կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը (կին/տղամարդ)	Աշխատանքի միջազգային կազմակերպություն, ILOSTAT տվյալների բազա, 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
Կրթության ձեռքբերում	Կանանց և տղամարդկանց գրագիտության մակարդակների հարաբերակցություն (կին/տղամարդ)	Միացյալ Ազգերի Կրթական, Գիտական և Մշակութային կազմակերպություն (UNESCO), 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
	Իգական և արական սեռի տարրական կրթական համակարգում ներգարվվածության հարաբերակցությունը (իգական/արական)	UNESCO-ի վիճակագրական, կրթական տվյալների բազա 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
	Իգական և արական սեռի միջնակարգ կրթական համակարգում ներգարվվածության հարաբերակցությունը (իգական/արական)	UNESCO-ի վիճակագրական, կրթական տվյալների բազա 2017թ. կամ ամենավերջին հասանելի տվյալը
	Իգական և արական սեռի բարձրագույն կրթական համակարգում ներգարվվածության հարաբերակցությունը (իգական/արական)	UNESCO-ի վիճակագրական, կրթական տվյալների բազա 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
Առողջություն և գոյատևում	Նորածինների սեռի հարաբերակցությունը (աղջիկ/տղա)	Միացյալ Ազգերի կազմակերպություն, Աշխարհի բնակչության հեռանկարները, 2017թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
	Առողջ կյանքի տևողության հարաբերակցությունը (կին/տղամարդ)	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն, 2016թ. (կամ ամենավերջին հասանելի տվյալը)
Քաղաքական մասնակցություն	Պառլամենտում կանանց և տղամարդկանց թվաքանակի հարաբերակցությունը	Միջխորհրդարանական միություն, Հոկտեմբեր 2018թ.
	Նախարար կանանց և տղամարդկանց թվաքանակի հարաբերակցությունը	Միջխորհրդարանական միություն, Հունվար 2017թ.
	Պետության կին և տղամարդ ղեկավարների ղեկավարության տարիների հարաբերակցությունը (Վերջին 50 տարիների կտրվածքով)	Համաշխարհային տնտեսական համաժողովի հաշվարկներ, 2018թ. հունիսի 30-ի դրությամբ

Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ: Այս ենթաինդեքսը ընդգրկում է երեք բաղկացուցիչ՝ մասնակցության անհավասարություն, վարձատրության անհավասարություն և առաջխաղացման անհավասարություն: Մասնակցության անհավասարությունը ընդգրկում է կանանց և տղամարդկանց աշխատուժի մասնակցության մակարդակների տարբերությունները: Վարձատրության անհավասարությունը սահմանվում է կանանց և տղամարդկանց վաստակած

եկամուտների հարաբերակցության և միևնույն կատարված աշխատանքի համար կանանց և տղամարդկանց վարձատրության հավասարության գնահատականներով: Առաջխաղացման անհավասարությունը սահմանվում է օրենսդրական համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում ընդգրկված կանանց և տղամարդկանց հարաբերակցության, մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում ընդգրկված կանանց և տղամարդկանց հարաբերակցության գնահատականներով:

Կրթության ձեռքբերում: Այս ենթաինդեքսը չափում է կանանց և տղամարդկանց համար կրթության հասանելիությունը: Այն սահմանվում է տարրական, միջնակարգ և բարձրագույն կրթության մակարդակներում կանանց և տղամարդկանց մասնակցության, ինչպես նաև կանանց և տղամարդկանց գրագիտության մակարդակների հարաբերակցության գնահատականներով:

Առողջություն և գոյատևում: Այս ենթաինդեքսը ստացվում է երկու ցուցանիշների գնահատման արդյունքում: Առաջին ցուցանիշը նորածինների սեռի հարաբերակցությունն է, որը նպատակ ունի բացահայտել՝ արդյո՞ք երկրներում առկա է այն երևույթը, որով «բացառվում են իգական սեռի ներկայացուցիչները» և նախապատվություն է տրվում արական սեռին: Երկրորդ ցուցանիշը կանանց և տղամարդկանց առողջ կյանքի տևողության հարաբերակցությունն է: Այս գնահատականը նպատակ ունի ներկայացնել կանանց և տղամարդկանց առողջ կյանքով ապրելու ակնկալվող տարիների քանակը: Այն հաշվի է առնում բռնության, հիվանդության, թերսնման և նման այլ գործոնների պատճառով կորցրած առողջ կյանքով ապրելու տարիների քանակը:

Քաղաքական մասնակցություն: Այս ենթաինդեքսը ստացվում է երեք ցուցանիշների՝ խորհրդարանում, որպես նախարար և որպես պետության ղեկավար կանանց և տղամարդկանց թվաքանակի հարաբերակցության գնահատման արդյունքում:

Նշված ցուցանիշների համար յուրաքանչյուր ենթաինդեքսի մեջ սահմանվում են կշիռներ: Ստացված կշիռների պարզ միջին թվաբանականի արդյունքում ստացվում են ենթաինդեքսները, իսկ վերջիններիս պարզ միջին թվաբանականի արդյունքում ստացվում է Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսը: Մեթոդաբանությունը առավել մանրամասն ներկայացված է http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf հղմամբ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԳՆԱՀԱՏԱԿԱՆՆԵՐԸ

2018թ. ՀՀ ՀԳԱ ինդեքսը կազմել է 0.678, որի արդյունքում երկիրը դիտարկվող 149 երկրների շարքում զբաղեցրել է 98-րդ հորիզոնականը: 2007-2018թթ. ՀՀ ՀԳԱ ինդեքսն ունի դրական զարգացում, սակայն զբաղեցրած հորիզոնականով երկիրը նահանջել է: Վերջին հինգ տարիներին, սակայն, ՀԳԱ ինդեքսի անընդհատ դրական զարգացումը հանգեցրել է նաև ՀՀ-ի զբաղեցրած հորիզոնականի բարելավմանը, որի արդյունքում 2014թ. 103-րդ հորիզոնականից 2018-ին երկիրը տեղափոխվել է 98-րդ հորիզոնականը:

Գծապատկեր 5. ՀՀ Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի զարգացումները



2018թ. ՀՀ ցուցանիշի բարելավումը հիմնականում պայմանավորված է «Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» և «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսների բարելավմամբ: Տնտեսական մասնակցության առումով ՀՀ-ն 2018թ. Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի ցանկում 73-րդն է, կրթության ձեռքբերման առումով՝ 35-րդը, առողջության և գոյատևման առումով՝ 148-րդ, իսկ քաղաքական մասնակցության առումով՝ 115-րդը:

Աղյուսակ 9. ՀՀ Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի և ենթաինդեքսների զարգացումները

Ցուցանիշ/Տարի		2013	2014	2015	2016	2017	2018
ՀՀ Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքս	**Հորիզոնական**	**94**	**103**	**105**	**102**	**97**	**98**
	Ինդեքս	0.663	0.662	0.668	0.669	0.677	0.678
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**Հորիզոնական**	**82**	**82**	**79**	**69**	**71**	**73**
	Ինդեքս	0.638	0.648	0.664	0.671	0.671	0.675
Կրթության ձեռքբերում	**Հորիզոնական**	**29**	**31**	**35**	**27**	**42**	**35**
	Ինդեքս	1	1	1	1	0.999	1
Առողջություն և գոյատևում	**Հորիզոնական**	**131**	**142**	**144**	**143**	**143**	**148**
	Ինդեքս	0.95	0.933	0.939	0.939	0.939	0.939
Քաղաքական մասնակցություն	**Հորիզոնական**	**115**	**123**	**125**	**125**	**111**	**115**
	Ինդեքս	0.066	0.068	0.068	0.068	0.099	0.099

«Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսով Հայաստանը այս տարի վատթարացրել է իր դիրքերը 4 կետով՝ 111-րդ հորիզոնականից տեղափոխվելով 115-րդ հորիզոնական: Դա պայմանավորված է նրանով, որ «Քաղաքական մասնակցություն» ենթաինդեքսի ներքո դիտարկվող երեք ցուցանիշները նախորդ տարիների համեմատությամբ էապես չեն փոփոխվել, իսկ մնացած երկրներում ակնհայտ է դրական զարգացումը: Այսպես, ՀՀ-ում կանանց ներկայացվածությունը խորհրդարանում 2018թ. կազմել է 18 տոկոս[3], դիտարկվող հիսուն տարիների ընթացքում ՀՀ-ն երբեք չի ունեցել կին ղեկավար, իսկ նախարար կանայք կազմել են ընդհանուր նախարարների ընդամենը 11 տոկոսը:

«Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ» ենթաինդեքսի դեպքում Հայաստանը վատթարացրել է իր դիրքերը 2 հորիզոնականով՝ 2017թ. 71–րդ հորիզոնականից տեղափոխվելով 73-րդ հորիզոնական: Ըստ զեկույցի՝ 2018թ. սահմանվել է, որ օրենսդրական համակարգում բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածների միայն 29.5 տոկոսն են կազմում կանայք, իսկ

[3] Խորհրդարանում կանանց ներկայացվածության աշխարհի միջին ցուցանիշը կազմում է 28 % է:

մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում կանանց զբաղվածությունը կազմում է այս ոլորտում ընդհանուր զբաղվածության 61.6 տոկոսը:

Թեև գենդերային հավասարության ամենալավ պատկերը **կրթության ոլորտում է**, սակայն այստեղ Հայաստանը 2017-ին զգալի հետընթաց է արձանագրել՝ 2016-ի 27-րդ հորիզոնականից 2017-ին 144 երկրների շարքում տեղափոխվելով 42-րդ հորիզոնականը: Այս հետընթացի հետևանքով 2018-ին ՀՀ-ն թեև կրկին բարելավել է իր դիրքերը, այդուհանդերձ, դեռևս զիջում է նախորդ տարիների զբաղեցրած դիրքերին: Գրագիտության և տարրական կրթական համակարգում ներգարվվածության մակարդակով Հայաստանը գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշները համապատասխանաբար 0.117 և 0.021 միավորներով, իսկ միջնակարգ և բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածության մակարդակով ՀՀ-ն ստացել է առավելագույն 1 միավոր՝ գերազանցելով աշխարհի միջին ցուցանիշները՝ համապատասխանաբար 0.033 և 0.061 միավորներով:

Դիտարկվող չորս ենթաինդեքսների շարքում, ամենավատ պատկերը **«Առողջություն և գոյատևում»** ենթաինդեքսի դեպքում է: Դիտարկվող 149 երկրների շարքում այս ենթաինդեքսով Հայաստանը զբաղեցնում է նախավերջին՝ 148-րդ հորիզոնականը: Ընդ որում երկիրը վատթարացրել է իր դիրքերը նաև նախորդ տարվա համեմատ՝ 2017-ի 143-րդ հորիզոնականից տեղափոխվելով 148-րդ հորիզոնական: Դա պայմանավորված է նրանով, որ վարկանիշի կառուցվածքում հաշվի է առնվում նորածինների սեռերի հարաբերակցությունը և հենց այդ ցուցանիշի զգալի շեղման հետևանքով է Հայաստանը զբաղեցնում վատ հորիզոնական: Հայաստանում պտղի սեռով պայմանավորված հղիության արհեստական ընդհատումների պատճառով նորածինների սեռերի հարաբերակցությունը զգալիորեն շեղված է բնականոնի համեմատությամբ:

Աղյուսակ 10. ՀՀ Համաշխարհային գենդերային անհավասարության ենթաինդեքսների և ցուցանիշների գնահատականները

	Դիրք	Ցուցանիշ	Միջին (Աշխարհ)	Կին	Տղամարդ	Կին/Տղամարդ
Տնտեսական մասնակցություն և հնարավորություններ	**73**	**0.675**	**0.586**			
Աշխատուժի մասնակցության աստիճան	84	0.762	0.669	57.7	75.7	0.76
Միևնույն կատարված աշխատանքի համար վարձատրության հավասարություն	38	0.709	0.645			
Վաստակած եկամուտ (US$)	99	0.545	0.51	6,926	12,714	0.54
Օրենսդրական համակարգում, բարձրաստիճան և ղեկավար պաշտոններում զբաղվածություն	86	0.419	0.329	29.5	70.5	0.42
Մասնագիտական և տեխնիկական աշխատանքներում զբաղվածություն	1	1	0.753	61.6	38.4	1.6
Կրթության ձեռքբերում	**35**	**1**	**0.949**			
Գրագիտության մակարդակ	49	0.999	0.882	99.7	99.8	1
Տարրական կրթական համակարգում ներգարվվածություն	69	0.999	0.978	92	92.1	1
Միջնակարգ կրթական համակարգում ներգարվվածություն	1	1	0.967	88.1	87.5	1.01
Բարձրագույն կրթական համակարգում ներգարվվածություն	1	1	0.939	58.7	46.1	1.27
Առողջություն և գոյատևում	**148**	**0.939**	**0.955**			
Նորածինների սեռի հարաբերակցություն	148	0.886	0.921			0.89
Առողջ կյանքի տևողություն	1	1.06	1.034	68.7	63.6	1.08
Քաղաքական մասնակցություն	**115**	**0.099**	**0.223**			
Կանայք խորհրդարանում	96	0.221	0.284	18.1	81.9	0.22
Նախարար կանայք	109	0.125	0.208	11.1	88.9	0.12
Պետության կին ղեկավարների ղեկավարության տարիներ (վերջին 50 տարիների կտրվածքով)	71	0	0.189	0	50	0

Զեկույցում առանձնացվել են նաև այն հիմնական ցուցանիշները, որոնց հիման վրա ներկայացվել են հաշվարկները:

Աղյուսակ 11. Համաշխարհային գենդերային անհավասարության ինդեքսի գնահատման ցուցանիշներ

Ցուցանիշ	Կին	Տղամարդ	Գնահատական
Աշխատուժի մասնակցություն, %			
Չափահաս բնակչության մեջ գործազուրկների մասնաբաժինը	19.2	17.4	1.11
Ոչ ֆորմալ զբաղվածության աշխատողներ	19.1	32.4	0.59
Աշխատուժի մեջ բարձր որակավորում ունեցող աշխատուժի բաժինը	15	13.9	1.07
Ընտանեկան գործունեության մեջ ընդգրկված աշխատողներ	10.5	4.4	2.38
Տնտեսական առաջնորդություն, %			
Գործատուներ	0.3	4.4	0.08
Ակտիվների հասանելիություն, հազար ՀՀ դրամ			
Միջին ամսական եկամուտ	79.5	119.2	0.67
Քաղաքական առաջնորդություն			
Կանանց կողմից ընտրելու իրավունք ձեռք բերելու տարի			1918
Պետության կին ղեկավարների թիվը, մարդ			0
Ընտանիք			
Միայնակ կյանքի միջին տևողությունը, տարի	24.6	28.3	0.87
Մինչև 25 տարեկան ամուսնացածների կշիռը, %	41.3	13.5	3.06
Առաջին երեխա ունենալու կանանց միջին տարիքը, տարի			27
Մեկ կնոջ կողմից ունեցած երեխաների միջին թիվը, մարդ			1.61
Կրթություն և հմտություններ, %			
Դպրոց չհաճախող երեխաներ	3.7	3.5	1.08
Գիտության թեկնածուներ	0.2	0.5	0.49
Ինտերնետի օգտագործում	53	56.6	0.94
Ըստ մասնագիտությունների շրջանավարտներ, %			
Գյուղատնտեսություն, անտառային տնտեսություն, ձկնորսություն և անասնաբուժություն	2.3	5.7	0.41
Արվեստ և հումանիտար գիտություններ	28	22.8	1.23
Բիզնես, կառավարում և իրավունք	16.7	21	0.8
Կրթություն	21.8	7.1	3.07
Ճարտարագիտություն, մանուֆակտուրա և շինարարություն	4.1	16.2	0.26
Առողջապահություն	16.6	8.1	2.06
Ինֆորմացիոն և կապի տեխնոլոգիաներ	0.8	2.3	0.35
Բնական գիտություններ, մաթեմատիկա և վիճակագրություն	5.1	7.7	0.66
Ծառայություններ	0.5	4.1	0.11
Սոցիալական ծառայություններ, լրագրություն և տեղեկատվություն	1	0.3	2.87
Առողջություն,%			
Մինչև 5 տարեկան երեխաների մանկամահացություն (100.000 երեխայի հաշվով)	0.2	0.3	0.7
Մահացություն վարակիչ և պարազիտիկ հիվանդությունների պատճառով (100.000 բնակչի հաշվով)	0.1	0.2	0.41
Պատահարների արդյունքում մահացություն	0.3	0.6	0.41
Կանխամտածված և ինքնավնասման հետևանքով մահացություն (100.000 բնակչության հաշվով)	0.0	0.2	0.3

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հետխորհրդային երկրների շրջանում գենդերային հավասարության ցուցանիշով Հայաստանից առաջ են Ղրղզստանը՝ 86-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.69), Ռուսաստանը՝ 75-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.70), Ուկրաինան՝ 65-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.71), Ղազախստանը՝ 60-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.71), Մոլդովան՝ 35-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.73), Բելառուսը՝ 28-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.75), Ադրբեջանը՝ 97-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.68): ՀԳԱ ինդեքսով Հայաստանը գերազանցում է Վրաստանին՝ 99-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.68) և Տաջիկստանին՝ 123-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.64): Տարածաշրջանի մյուս հարևան երկրների դեպքում ՀՀ-ն գերազանցում է Թուրքիային՝ 130-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.628) և Իրանին՝ 142-րդ հորիզոնական (ՀԳԱ ինդեքս՝ 0.589):

2018թ. գենդերային հավասարության տեսանկյունից առաջատարն է դարձել Իսլանդիան, նրան են հետևում Նորվեգիան և Շվեդիան: Իսլանդիային հաջողվել է գենդերային բացը (Գենդերային անհամապատասխանությունները) վերացնել 85 տոկոսով, Նորվեգիային՝ 83, իսկ Շվեդիային՝ 82 տոկոսով: Լիարժեք հավասարության հաղթահարման ճանապարհը Հայաստանն անցել է 67%-ով, այն դեպքում, երբ աշխարհում գենդերային բացը հաջողվել է հաղթահարել միջին հաշվով 68%-ով: Ընդհանուր առմամբ, դիտարկվող 149 երկրների շարքում 76 երկիր գենդերային անհավասարությունը վերացրել է 70 և ավել տոկոսով, 72 երկիր՝ 50-70 տոկոսով, և միայն Եմենն է գենդերային անհավասարութունը վերացրել է 49 տոկոսով: Վերջինիցս ցածր ցուցանիշ դիտարկվող 149 երկրների շարքում չկա:

Զեկույցի գնահատականներով՝ համաշխարհային գենդերային բացի հաղթահարման, այսինքն՝ դիտարկվող ոլորտներում առկա գենդերային անհավասարությունների վերացման համար կպահանջվի 108 տարի, մինչդեռ անցյալ տարվա գնահատականներով սահմանվել էր 100 տարի: Մասնավորապես,

տնտեսության ոլորտում հավասարությունը ակնկալվում է 202 տարուց, քաղաքական համակարգում՝ 107 տարուց, իսկ կրթության ոլորտում հավասարությունը հասանելի կլինի առաջիկա 14 տարվա ընթացքում:

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՄԱՐԴԿԱՅԻՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԻՆԴԵՔՍ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Մարդկային կապիտալի զարգացումը երկրների համար կարող է զարգացման ավելի մեծ հնարավորություններ ստեղծել, քան տնտեսական, սոցիալական կամ այլ մշակված ռազմավարությունները: «Մարդկային կապիտալ» հասկացության ներքո զեկույցը դիտարկում է մարդկանց գիտելիքները և հմտությունները, որոնք հնարավորություն են տալիս գլոբալ տնտեսական համակարգում ստեղծել կամ նպաստել արժեքի ձևավորմանը: Համաշխարհային մարդկային կապիտալի ինդեքսը (այսուհետ՝ ՀՄԿ ինդեքս) 2017թ. գնահատել է 130 երկրների տնտեսությունները՝ նպատակ ունենալով 0-ից (վատագույն) մինչև 100 (լավագույն) գնահատման սանդղակով ներկայացնել այդ տնտեսությունների՝ մարդկային կապիտալի զարգացմանն ուղղված գործունեությունը չորս ուղղություններով՝ ընդունակություններ, զբաղվածություն, զարգացում և նոու-հաու: Զեկույցը դիտարկում է այդ գնահատականները՝ առանձնացնելով մարդկանց տարիքային խմբերը: Այսինքն՝ միևնույն գնահատականը դիտարկվում է առանձին 0-14, 15-24, 25-54, 55-64 և 65 տարեկանից բարձր անձանց խմբերի համար: Այս դասակարգումը հնարավորություն է տալիս առավել պարզ պատկեր ստանալ առկա խնդիրների և հնարավոր լուծումների համար: **«Ընդունակություններ»** ենթաինդեքսը ըստ յուրաքանչյուր տարիքային խմբի ներկայացնում է կրթական բազայի առկայությունը: **«Զբաղվածություն»** ենթաինդեքսը ներկայացնում է հմտությունների առկայությունը և այդ հմտությունների կիրառումը աշխատանքում, **«Զարգացում»** ենթաինդեքսը հնարավորություն է տալիս ներկայացնել այն ձգտումները, որոնք դրսևորվում են կրթություն, հմտություններ ձեռք

բերելու համար, այս ենթաինդեքսը նաև գնահատում է այն աշխատանքը, որը նպաստում է ուսանողներին և զբաղված բնակչությանը՝ ձեռք բերելու նոր գիտելիքներ: **«Նոու-հաու»** ենթաինդեքսը ներկայացնում է մասնագիտացված հմտությունների և նորարարական գիտելիքների կիրառումը աշխատանքում:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային մարդկային կապիտալի ինդեքսի հաշվարկին մասնակցում են չորս ենթաինդեքսներ, որոնք էլ իրենց հերթին ստացվում են 21 առանձին ցուցանիշների հաշվարկման արդյունքում: Հաշվարկում տվյալ ցուցանիշը դիտարկվում է միայն այն դեպքում, երբ վերջինս հնարավոր է ձեռք բերել դիտարկվող երկրների առնվազն կեսի համար: Տվյալների ձեռքբերման աղբյուր են հանդիսանում միջազգային կազմակերպությունները, ինչպիսիք են՝ Աշխատանքի միջազգային կազմակերպությունը (ILO), Միավորված ազգերի կազմակերպության Կրթության, գիտության և մշակույթի կազմակերպությունը (UNESCO), իսկ տվյալները հավաքվում են Համաշխարհային տնտեսական համաժողովի կողմից իրականացվող հարցումների արդյունքում: ՀՄԿ ինդեքսի հաշվարկին մասնակցող չորս ենթաինդեքսներն ունեն հավասար կշիռներ, և քանի որ այդ ենթաինդեքսների հաշվարկին մասնակցող տվյալների մեծ մասն ունի տոկոսային արտահայտություն, ՀՄԿ ինդեքսը նույնպես ներկայացվում է տոկոսային արտահայտությամբ: Նախորդ տարիների և 2017թ. ՀՄԿ ինդեքսի հաշվարկման մեթոդաբանությունը և դիտարկվող ցուցանիշները տարբերվում են միմյանցից, ինչի հետևանքով նախորդ տարիների հետ 2017թ. ցուցանիշները համադրելի չեն: Մեթոդաբանությունը առավել մանրամասն ներկայացված է http://www3.weforum.org/docs/WEF_GGGR_2018.pdf հղմամբ: Ստորև ներկայացնենք ՀՄԿ ինդեքսի հաշվարկմանը մասնակցող ենթաինդեքսները և ցուցանիշները.

Աղյուսակ 12. ՀՄԿ ինդեքսի հաշվարկմանը մասնակցող ենթաինդեքսները և ցուցանիշները

Զարգացում	ԸՆԴՈՒՆԱԿՈՒԹՅՈՒՆ
Նախնական կրթության ներգրավվածության մակարդակ (Տարրական կրթության համար սահմանված տարիքային խմբում ընդգրկված երեխաների տոկոսը, ովքեր ստանում են հմպ. կրթություն)	Գրագիտություն և հաշվողունակություն (Բնակչության այն տոկոսը, որը կարողանում է գրել, կարդալ և կատարել պարզագույն թվաբանական հաշվարկներ)
Հիմնական դպրոցների որակը (Տվյալները հավաքագրվել են հարցումների արդյունքում: Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցին՝ "Ինչպես կգնահատեք հիմնական դպրոցների, կրթական համակարգի որակը Ձեր երկրում՝ 1= վատ, 7= գերազանց")	Նախնական կրթության ձեռքբերման մակարդակ (Բնակչության այն տոկոսը, որն ունի տարրական նախնական կրթություն)
Միջնակարգ կրթության ներգրավվածության մակարդակ (Միջնակարգ կրթության համար սահմանված տարիքային խմբում ընդգրկված երեխաների տոկոսը, ովքեր ստանում են հմպ. կրթություն)	Միջնակարգ կրթության ձեռքբերման մակարդակ (Բնակչության այն տոկոսը, որն ունի միջնակարգ կրթություն)
Միջնակարգ կրթության համակարգում գենդերային բացը (Միջնակարգ կրթական համակարգում իգական և արական սեռերի ներգրավվածության հարաբերակցությունը)	Բարձրագույն կրթության ձեռքբերման մակարդակ (Բնակչության այն տոկոսը, որն ունի բարձրագույն կրթություն)
Տեխնիկական/Մասնագիտական կրթության ներգրավվածության մակարդակը (Ընդհանուր միջնակարգ կրթական համակարգում ներգարվվածության մեջ Տեխնիկական / մասնագիտական ներգրավվածության տոկոսը)	**ՆՈՈՒ-ՀԱՈՒ**
Բարձրագույն կրթության ներգրավվածության մակարդակ (Անկախ տարիքից բարձրագույն կրթական համակարգում ներգրավվածությունը, որը հաշվարկվում է վերջին հինգ տարիներին միջնակարգ կրթությունը ավարտած ուսանողների ընդհանուր թվաքանակի նկատմամբ)	Բարձր որակավորված աշխատողների մասնաբաժինը (Բարձրագույն կրթությամբ աշխատողների մասնաբաժինը ընդհանուր զբաղվածության մեջ)
Շրջանավարտների հմտությունների տարբերակվածությունը (ներկայացնում է բարձրագույն կրթական համակարգում ներգրավված ուսանողների մասնագիտական տարբերակվածությունը)	Միջին որակավորված աշխատողների մասնաբաժին (Առնվազն միջնակարգ կրթությամբ աշխատողների մասնաբաժինը ընդհանուր զբաղվածության մեջ)
Կրթության համակարգի որակը (Տվյալները հավաքագրվել են հարցումների արդյունքում: Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցին՝ "Ինքան լավ է կրթական համակարգը Ձեր երկրում բավարարում մրցակցային տնտեսության պահանջները՝ 1= վատ, 7= գերազանց")	Տնտեսական բարդությունը (Երկրի աշխատուժի արտադրողական գիտելիքների եւ հմտությունների խորությունը,որը արտահայտվում է նաև թողարկված արտադրանքի մեջ)
Անձնակազմի վերապատրաստման մակարդակը (Տվյալները հավաքագրվել են հարցումների արդյունքում: Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցին՝ "Որքան հաճախ են Ձեր երկրում կազմակերպությունները ներդրում կատարում աշխատողների վերապատրաստման և զարգացման համար՝ 1= վատ, 7= գերազանց")	Հմուտ աշխատակիցների հասանելիությունը (Տվյալները հավաքագրվել են հարցումների արդյունքում: Հարցման մասնակիցները պատասխանել են հետևյալ հարցին՝ "Ձեր երկրում կազմակերպությունները որքան հեշտ են գտնում իրենց պահանջներին բավարարող աշխատողներ՝ 1= վատ, 7= գերազանց")
ԶԲԱՂՎԱԾՈՒԹՅՈՒՆ	
Աշխատուժի մասնակցության աստիճան (տնտեսապես ակտիվ բնակչության տոկոսը)	
Աշխատուժի գենդերային բաշխվածությունը (տնտեսապես ակտիվ կանանց և տղամարդկանց հարաբերակցությունը)	
Գործազրկության մակարդակ (ընդհանուր աշխատուժի մեջ գործազուրկների տոկոսը)	
Ոչ ամբողջական զբաղվածության մակարդակ (Բնակչության այն տոկոսը, որն ունի հնարավորություն, ցանկություն և կարողություն աշխատել հավելյալ ժամեր)	

2017թ. ՀՀ ՀՄԿ ինդեքսը կազմել է 64.46, որի արդյունքում երկիրը դիտարկվող 130 երկրների շարքում զբաղեցրել է 49-րդ հորիզոնականը: Նախորդ տարիներին կիրառվող մեթոդաբանության և դիտարկվող ցուցանիշների արդյունքում երկիրը 2015-ին 124 երկրների շարքում զբաղեցրել է 43-րդ հորիզոնականը (ՀՄԿ ինդեքս՝ 72.50), իսկ 2016-ին 130 երկրների շարքում՝ 37-րդ հորիզոնականը (ՀՄԿ ինդեքս՝ 75.39): 2017թ. ՀՀ ցուցանիշի ձևավորման վրա ամենամեծ դրական ազդեցությունն ունի «Ընդունակություններ» ենթաինդեքսը, որով երկիրը 83.31 միավորով զբաղեցրել է 3-րդ հորիզոնականը, իսկ «Զբաղվածություն» ենթաինդեքսով երկիրը առաջատար դիրքերում չի եղել և 54.12 միավորով զբաղեցրել է 114-րդ հորիզոնականը:

Աղյուսակ 13. ՀՀ Համաշխարհային մարդկային կապիտալի ենթաինդեքսները, 2017թ.

	Ինդեքս	Հորիզոնական
ՀՀ Համաշխարհային մարդկային կապիտալի ինդեքս	64.46	49
«Ընդունակություններ» ենթաինդեքս	83.31	3
«Զբաղվածության» ենթաինդեքս	54.12	114
«Զարգացում» ենթաինդեքս	65.37	61
«Նոու-հաու» ենթաինդեքս	55.05	47

«Ընդունակություններ» ենթաինդեքսի ցուցանիշների շարքում Գրագիտության և հաշվողունակության մակարդակով ՀՀ-ն գրանցել է բավական դրական արդյունքներ՝ 25-54 տարեկան անձանց խմբում զբաղեցրել է 6-րդ, 55-64 տարեկան անձանց խմբում՝ 5-րդ, 65 տարեկանից բարձր անձանց խմբում՝ 9-րդ հորիզոնականները, իսկ 15-24 տարեկան անձանց խմբում զբաղեցրել է 32-րդ հորիզոնականը: Նախնական կրթության ձեռքբերման մակարդակով 15-24 տարեկան անձանց դեպքում ՀՀ գնահատականը հասել է առավելագույն 100 միավորին: «Զբաղվածություն» ենթաինդեքսի դեպքում ՀՀ ցուցանիշները զիջում են դիտարկվող երկրներից շատերին:

Այսպես, աշխատուժի մասնակցության աստիճանով 25-54 տարեկան անձանց դեպքում ՀՀ-ն զբաղեցնում է 104-րդ հորիզոնականը, գործազրկության մակարդակով նույն տարիքային խմբի դեպքում՝ 113-րդ հորիզոնականը: «Զարգացում» ենթաինդեքսի դեպքում Հիմնական դպրոցների որակի գնահատականով ՀՀ-ն զբաղեցրել է 60-րդ հորիզոնականը, իսկ միջնակարգ կրթության համակարգում գենդերային բացի բացակայության տեսանկյունից ՀՀ-ն առաջատարն է, այսինքն՝ զեկույցի գնահատմամբ ՀՀ-ում միջնակարգ կրթական համակարգում իգական և արական սեռերի ներգրավվածության տեսանկյունից գոյություն ունի հավասարություն: «Նոու-հաու» ենթաինդեքսի ցուցանիշներից Բարձր որակավորված աշխատուժի մասնաբաժնի դեպքում ՀՀ-ն դիտարկվող երկրների շարքում 25-64 տարեկան անձանց խմբում զբաղեցրել է 45-րդ հորիզոնականը: ՀՀ-ում առնվազն միջնակարգ կրթությամբ աշխատողների մասնաբաժինը ընդհանուր զբաղվածների թվաքանակի մեջ, ըստ զեկույցի տվյալների, գնահատվել է 92.9 տոկոս, իսկ բարձրագույն կրթությամբ աշխատողների մասնաբաժինը ընդհանուր զբաղվածների թվաքանակի մեջ գնահատվել է 31.1 տոկոս: Ցուցանիշների գնահատականները առավել մանրամասն դիտարկենք աղյուսակի տեսքով.

Աղյուսակ 14. ՀՀ Համաշխարհային մարդկային կապիտալի ցուցանիշների գնահատականները*

Ցուցանիշներ	0-14 տարեկանների խումբ			15-24 տարեկանների խումբ			25-54 տարեկանների խումբ			55-64 տարեկանների խումբ			65+ տարեկանների խումբ		
Ընդունակություն	Արժեք	Գնահատական	Հորիզոնական	Արժեք	Գնահատական	Հորիզոնական	Արժեք	Գնահատական	Հորիզոնական	Արժեք	Գնահատական	Հորիզոնական	Արժեք	Գնահատական	Հորիզոնական
Գրագիտություն և հաշվողունակություն				99.8	99.8	32	99.9	99.9	6	99.8	99.8	5	99.1	99.1	9
Նախնական կրթության ձեռքբերման մակարդակ				100	100	26	99.9	99.9	22	99.8	99.8	19	99.4	99.4	24
Միջնակարգ կրթության ձեռքբերման մակարդակ				97.7	97.7	14	98.4	98.4	15	97.4	97.4	12	86.7	86.7	17
Բարձրագույն կրթության ձեռքբերման մակարդակ							26.6	26.6	23	22.1	22.1	21	20.2	20.2	11
Զբաղվածություն															
Աշխատուժի մասնակցության աստիճան				37.7	37.7	91	76.5	76.5	104	70.4	70.4	38	36	36	32
Աշխատուժի գենդերային բաշխվածությունը				0.81	80.7	64	0.75	75.2	79	0.73	72.5	48	0.55	55	45
Գործազրկության մակարդակ				37.6	20.7	119	18	36.1	113	13	42.7	113	8.6	50.9	109
Ոչ ամբողջական զբաղվածության մակարդակ)				26.7	51.9	84	16.6	37.7	79	14	41.3	74	5.9	57.9	64
Զարգացում															
Նախնական կրթության ներգրավվածության մակարդակ	96.4	96.4	66												
Հիմնական դպրոցների որակը	4.1	51.8	60												
Միջնակարգ կրթության ներգրավվածության մակարդակ	90.8	90.8	50												
Միջնակարգ կրթության համակարգում գենդերային բացը	1	100	1												
Տեխնիկական/Մասնագիտական կրթության ներգրավվածության մակարդակը				26.2	26.2	59									
Բարձրագույն կրթության ներգրավվածության մակարդակ				44.3	44.3	60									
Շրջանավարտների հմտությունների տարբերակվածությունը				0.16	92.3	41									
Կրթության համակարգի որակը				3.7	45.3	63									
Անձնակազմի վերապատրաստման մակարդակը									3.5	41.2	104				
Նոու-հաու															
Բարձր որակավորված աշխատողների մասնաբաժինը									31.1	31.1	45				
Միջին որակավորված աշխատողների մասնաբաժին									92.9	92.9	32				
Տնտեսական բարդությունը															
Հմուտ աշխատակիցների հասանելիությունը									3.5	41.1	115				

* Աղյուսակում անձնակազմի վերապատրաստման մակարդակը և «Նոու-հաու» ենթաինդեքսի ցուցանիշները հաշվարկված են 25-64 տարեկան անձանց համար

ՀԱՅԱՍՏԱՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՀԱՄԱՊԱՏԿԵՐՈՒՄ

Հետխորհրդային երկրների շրջանում Համաշխարհային մարդկային կապիտալի ցուցանիշով Հայաստանից առաջ են Ղրղզստանը՝ 46-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 65.14), Ռուսաստանը՝ 16-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 72.16), Ուկրաինան՝ 24-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 71.27), Ղազախստանը՝ 29-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 69.78): ՀՄԿ ինդեքսով Հայաստանը գերազանցում է Մոլդովային՝ 62-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 62.29), Տաջիկստանին՝ 57-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 63.79): Տարածաշրջանի մյուս հարևան երկրների դեպքում ՀՀ-ն գերազանցում է Թուրքիային՝ 75-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 60.33) և Իրանին՝ 104-րդ հորիզոնական (ՀՄԿ ինդեքս՝ 54.97): Բելառուսը, Ադրբեջանը և Վրաստանը զեկույցի շրջանակներում չեն դիտարկվել:

2017թ. Համաշխարհային մարդկային կապիտալի ցուցանիշով առաջատարն է դարձել Նորվեգիան (ՀՄԿ ինդեքս՝ 77.12), նրան են հետևում Ֆինլանդիան (ՀՄԿ ինդեքս՝ 77.07), Շվեյցարիան (ՀՄԿ ինդեքս՝ 76.48) և ԱՄՆ-ը (ՀՄԿ ինդեքս՝ 74.84): ՀՄԿ աշխարհի միջին գնահատականը կազմել է 62 միավոր, ինչը նշանակում է, որ միջին հաշվով աշխարհը զարգացրել է իր մարդկային կապիտալի միայն 62%-ը կամ հակառակը՝ միջին հաշվով ազգերը անտեսում կամ վատնում են իրենց տաղանդի 38%-ը: ՀՀ-ն ՀՄԿ ինդեքսի ցուցանիշով գերազանցում է աշխարհի միջին ցուցանիշը 2.46 միավորով:

Համաձայն զեկույցի արդյունքների՝ դիտարկվող երկրների շարքում միայն 25 երկրների դեպքում է հաջողվել ՀՄԿ ինդեքսով գերազանցել 70 տոկոսի սահմանը, 50 երկրների դեպքում ցուցանիշը տատանվում է 60-70 տոկոսի սահմաններում, 41 երկրների դեպքում՝ 50-60 տոկոսի սահմաններում, իսկ 14 երկրների դեպքում՝ 50 տոկոսից ցածր սահմաններում:

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*